

= 40 =

1928

~~372~~ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ն. Կ. Կ. Կ. ԱԳԻՏՊՐՈՊ ԲԱԺՆԻ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՛Ք.

5

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
Բ Ա Ն Ա Չ Ե Վ Ե Ր Ը

„ԿՈՄՈՒՆԻՍՏ՝Ի ԳՐԱԳՈՐԾՆ No 8.



ԱԳՁ

335.544(479.25)

824

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ն. Կ. Կ. Կ. ԱԳԻՏՄՐՈՊ ԲԱԺԻՒ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
4-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
Բ Ա Ն Ա Ձ Ե Վ Ե Ր Ը



«ԿՈՄՈՒՆԻՍՏԻ» ԳՐԱԳԱՐԱՆ № 8





824-49-2

ԲԱՆԱԶԵԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒՅՅԱՆ ԱՈՒԹԻՎ

Հիկ 4-րդ համազումարը լսելով Կենտկոմի քաղաքական և Կազմակերպչական հաշվետու զեկուցումները գտնում է, վոր Կենտկոմի տարած քաղաքական գիծը ճիշտ է յեղել, իսկ գործունեությունը բավարար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության 4-րդ համագումարը յեխելով ա) բանվորա-գյուղացիական մասսաների ակտիվության աճման, բ) կուսակցության կազմակերպության ամրապնդման և ընդլայնման, գ) խորհուրդների, պրոֆմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների աշխուժացման պայմաններից՝ առաջարկում է նորընտիր Կենտկոմին.

1. Ուժեղացնել աշխատանքները պրոֆմիություններում. կազմակերպել պրոֆմիություններում նոր ստեղծվող և վերականգնող արգյունաբերության բանվորությունը: Ուժեղացնել կուսակցականությունը պրոֆմիության ստորին և ղեկավար որդաններում: Բանվորներից և բատրակներից առաջ քաշել ակտիվ մասնակից անելով նրանց մեր գործնական աշխատանքներին: Կազմակերպել և ուժեղացնել արտադրական խորհրդակցություններ: Հետևողականորեն կիրառել կյանքում պրոֆեսսիոնալ ղեմուկ-բատախալի սկզբունքները:

2. Ուժեղացնել բանվորա-գյուղացիական յերիտասարգության կոմունիստական գատրարակությունը: ԼԿՅԵՄ միջոցով շարունակել կազմակերպչական աշխատանքները՝ ընդգրկելով քաղաքի յերիտասարգ բանվորությանը և գյուղի ակտիվ բատրակ, չքավոր և հեղափոխական միջակ գյուղացիական յերիտասարգներին: Ավելի ուշադրություն դարձնել յերիտասարգ բանվորահիների ու գեղջիկահիների ընդունելության վրա ԼԿՅԵՄ շարքերում: Ուժեղացնել կուսակցության մասսայական ղեկավարությունը ԼԿՅԵՄ նկատմամբ՝ ուժեղացնելով նրա համար կուսակցական կորիզը նրա մեջ:

3. Ապահովել կուսակցական ղեկավարությունը լայն մաս-

սասական կազմակերպութիւնները նկատմամբ, մասսաների կամավոր մասնակցութիւնն այդ կազմակերպութիւններին մեջ (ՄՈՊՐ, Ավիտքիմ և այլն)։ Կարգավորել այդ որգանների հաշվետվութիւնները մասսաների առաջ։ Սխտեմորեն կատարել զեկավար որգանների ընտրութիւնները։ Առաջ քաշել ակտիվ բանվորներ ու գյուղացիներ հիշյալ որգաններում աշխատելու համար։

4. Համագումարն առաջարկում է կուս-կազմակերպութիւններին ուշադրութիւն դարձնել բանվորութիւններին ու գեղջիւհուներին սոցիալիստական շինարարութեանը մասնակից անելուն։ Ուժեղացնել կուս-զեկավարութիւնը պատգամավորական ժողովներում։ Շարունակել գեղջիւհուների կազմակերպումը պատգամավորական ժողովների միջոցով։ Հատուկ ուշադրութիւն դարձնել խորհուրդների վերընտրութիւններին՝ կանանց մասնակցութիւնը ապահովելու համար։

5. Մտազգա խորհուրդների վերընտրութիւններին մասնակից անել բանվորութեան և գյուղի բարոսակ, չքավոր և միջակ գյուղացիութեան լայն մասսաներին։ Միջոցներ ձեռք առնել գյուղում չքավորների խորհրդակցութիւնների միջոցով կազմակերպել չքավոր գյուղացիութիւնը՝ միջակների հետ միասին խորհուրդների ընտրութիւնների ժամանակ ընդհանուր վարքագիծ մշակելու համար։ Ուշադրութիւն դարձնել նոր ակտիվ կազմեր առաջ քաշելու ստորին, շրջանային, գավառային և հանրապետական որգաններում աշխատելու։ Շարունակել գյուղխորհուրդների աշխուժացման գործը։

6. Համագումարն արձանագրում է այն, վոր վերջին տարում բաժնական աճել է սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիան։ Բանվոր-գյուղացիական մասսաները հետագայում ավելի մեծ չափով կոոպերացման յենթարկելու համար, անհրաժեշտ է ապահովել բանվորների և չքավոր ու միջակ գյուղացիների զեկավար դերը՝ կոոպերացիայի որգաններում։ Ուժեղացնել կուսակցութեան զեկավարութիւնը կոոպերացիայի ստորին և զեկավար որգաններում՝ կազմակերպելով զբա համար ֆրակցիաներ։ Ուշադրութիւն դարձնել գյուղատնտեսական և անայնագործական կոոպերացիային՝ տրամադրելով նրան փորձված աշխատավորներ։ Ձեռք առնել միջոցներ սխտեմորեն կիրառելու 14-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումները՝ կոոպերացիայի ասպարիզում։

7. Արձանագրելով ՓՈԿ-երի կարևոր դերը գյուղում՝ համագումարն առաջարկում է ավելի մեծ չափով գրավել գյուղական լայն մասսաներին ՓՈԿ-ի ստորին ցանցերը և աշխուժացնել նրա աշխատանքները։ Ուժեղացնել գյուղըջիւհուների զեկավարութիւնը

Փոկ-երի վրա: Կարգավորել հաշվետվութունները մասսաների առաջ:

8. Բանվորա-գյուղացիական մասսաների լայն կարիքները ժամանակին յերևան հանելու և բավարարելու համար՝ ուժեղացնել պետական կազմակերպութունները, առաջ քաշել ակտիվ բանվորներ և գյուղացիներ՝ պետական որգաններում աշխատելու համար: Ապահովել ազգային փոքրամասնութունների մասնակցութունը տեղական ու կենտրոնական որգաններում: Ուժեղացնել կուսակցութւյան ղեկավարութունը բոլոր այս ասպարեզներում:

9. Համագումարն անհրաժեշտ և համարում շարունակել կուսակցութւյան մեջ ընդունելութունը բանվորներից և գյուղի ակտիվ չքավոր ու հեղափոխական միջակ գյուղացիներից: Ուշադրութուն դարձնել բանվորուհիների և գեղջիկուհիների ընդունելութւյան վրա: Ուժեղացնել ընդունելութունն ազգային փոքրամասնութուններից:

10. Ի նկատի առնելով այն, վոր ՀԿԿ (Բ) կազմակերպութւյան մեջ տակավին խոշոր տոկոս են կազմում թեկնածուները, անհրաժեշտ համարել սխտեմորեն ուսումնասիրելու կուսանգամ փոխադրելու համար թեկնածուներին. ստուգել այն գյուղթեկնածուական խմբակները, վորտեղ նկատվում են հիվանդագին յերևույթներ: Ուժեղացնել աշխատանքները թեկնածուական խմբակներում:

11. Համագումարն առաջարկում և ուժեղացնել գյուղըջիջների աշխատանքների բովանդակութունը և նրանց ղեկավարութունը գյուղի խորհրդային, կոոպերատիվ և այլ կազմակերպութունների վրա: Ստուգման յինթարկել, ինչպես գյուղի, նույնպես և խորհրդային այն բջիջները, վորտեղ նկատվում են հիվանդագին յերևույթներ՝ հեռացնելով կուսակցութունից անկայուն տարրերը:

12. Անհրաժեշտ և մեծ ուշադրութուն դարձնել կուս-ապագաբատների ուժեղացման վրա. բարձրացնել գավկոմի և շրջկոմների հրահանգչական կազմի վորակը: Ուժեղացնել տեղական կուսակազմակերպութուններն ազիտպրոպ աշխատակիցներով: Կենտկոմին կից ունենալ մշտական հրահանգչական ապպարատ: Ուժեղացնել ինֆորմացիոն կապը և աշխատանքները: Շարունակել Կենտկոմի ընդունած գիծը՝ քաղաքից գյուղ մորիլիդացիայի և կամավոր կարգով աշխատողներ գործուղելու վերաբերմամբ:

13. Ներկուսակցական ղեմոկրատիայի կիրառման ասպարիդում համագումարն առաջարկում և հետևողականորեն կիրառել բոլոր բարձրագույն որգանների վորոշումները՝ նկատելով այդ

ներկայիս կուսակցական աշխատանքի հիմնական ու ընդհանուր մեթոդ, ինչպես նաև գլխավոր միջոց՝ կուսակցական դիսցիպլինան ու միասնականութիւնն ամրացնելու համար:

ԱԳԻՏ-ՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՍՊԱՐԻՋՈՒՏ

1. Տնտեսական և կուլտուրական վերելքի և գյուղի շերտավորման այս շրջանում յերբ մի կողմից յերևան և գալիս մանր բուրժուական զաղափարախոսութիւնը և մյուս կողմից անկուսակցական բանվորութեան և չքավոր ու միջակ գյուղացիութեան ակտիվութիւնը, ագիտացիայի և պրոպագանդայի, պրոլետարական զաղափարախոսութեան հարցերը խոշոր նշանակութիւն են ստանում և պետք է դառնան ամբողջ կուսակցութեան ուշադրութեան առարկա, նրա առօրյա տնտեսա-շինարարական և կուլտ-լուսավորական աշխատանքների ընթացքում:

2. Ագիտացիան և պրոպագանդան պետք է իրենց բովանդակութեան նյութ ունենան միջազգային դրութեան, արդշունարբութեան զարգացման, աշխատանքի արտադրողականութեան բարձրացման, գյուղատնտեսութեան ինտենսիֆիկացիայի, քաղաքական և գյուղատնտեսական անգրագիտութեան վերացման, գյուղի չքավոր ելեմենտների կազմակերպման և նրա ակտիվութեան ցուցահանման հարցերը՝ սոցիալիստական շինարարութեան գործում:

3. Ագիտացիայի և պրոպագանդայի բովանդակութեան հետ միասին պետք է փոխվի նաև նրա բնույթը: Պետք է իսպառ հրաժարվել մակերեսային, դեպքից դեպք տարվող ագիտացիայից: Ի հաշիվ կամպանիաների կրճատման՝ պետք է ուժեղացնել սխտեմատիք ագիտացիան և խորացրած պրոպագանդան: Վերջիններս պետք է կրեն կոնկրետ, առարկայական և ցուցադրական բնույթ: Ագիտպրոպները պետք է զաղափարորեն ընդգրկեն մեր յերկրի քաղաքական, կուլտուրական և արտադրական կյանքի բոլոր ձևերը:

4. Աշխատանքի այս բնույթը պահանջում է նախ և առաջ ագիտատորների և պրոպագանդիստների համապատասխան ընտրութիւն, յեղածների վերապատրաստութիւն և նորերի առաջ քաշում: Ագիտացիայի և պրոպագանդայի հարցերի շուրջը դասընթացը-համագումարների կազմակերպման, կուսխորհրդային զըզրոցավարանների ոգտագործման, խրճիթվարների և ակումբային

աշխատավորները դասընթացքների կազմակերպման, ազիտպրոպ կազմակերպիչների ինստիտուտի աշխատանքների խորացման և այլ միջոցներով մենք պետք է ստեղծենք ազիտատորների և պրոպագանդիստների ժամանակակից տիպը՝ և այդպիսով այդ ազիտպրոպակտի միջոցով խորացնենք մեր գաղափարախոսութիւնը և տարածենք բանվորա-գյուղացիական լայն մասսաների մեջ կոմմունիզմի պետական պրոպագանդան:

5. Ազիտպրոպ աշխատանքի յուրաքանչյուր բովանդակութիւն և մեթոդ պահանջում է համապատասխան կազմակերպվածութիւն: Ազիտպրոպ աշխատանքի կազմակերպութիւնը պետք է արտահայտվի՝ ազիտպրոպ կազմակերպիչների ինստիտուտի ամրացումով, ազիտպրոպներին կից կազմակերպվող կոլլեկտիւսների և հանձնաժողովների միջոցով նորանոր ընկերներ ազիտպրոպ աշխատանքի մեջ հրավիրելու միջոցով, վորոշ պլանային սխառմատիք և կանոնավոր աշխատանքի, տեղերի փոխելու ուսումնասիրութեան, ազիտպրոպ ուժերի կանոնավոր հաշվառու և բաշխման կազմակերպման միջոցով և վերջապէս քաղ. և կուլտ-լուսավորական մարմինների աշխատանքների ղեկավարման և համաձայնեցման միջոցով:

6. Ամբողջ սիստեմատիք ազիտացիան և պրոպագանդան պետք է կենտրոնացնել ակումբում և խրճիթ-ընթերցարաններում: Ուշոր ուշադրութիւն պետք է դարձնել ակումբների կուսկոլլեկտիւսների և պատանեկական սեկցիաների աշխատանքների ուժեղացման վրա: Ընդհանուր առմամբ ակումբներն ու խրճիթները պետք է դադարեն անբովանդակ ժամանցի վայր լինելուց և խելացի հանգստի հետ միասին պետք է դառնան նաև բանվորագյուղացիական մասսաների քաղաքական դաստիարակման ոջակներ:

7. Ազիտպրոպագանդան պետք է հետադաշում ևս մնա մեր ուշադրութեան կենտրոն գյուղատնտեսական անպրապիտութեան վերացման ասպարիզում: Անհրաժեշտ է գյուղական տնտեսութեան ինտենսիֆիկացիայի, ինդուստրիալիզացիայի և մեքենայացման ու նրա կոլլեկտիվիզացիայի տարակայացուցարական պրոպագանդա տանել՝ կազմակերպելով ցուցահանդեսներ, հատուկ գյուղատնտեսական խմբակներ, լայն չափով ոգտագործելով բերքի տնը և այլն:

8. Ազիտպրոպագանդայի հետ միասին վոչ պակաս խոշոր տեղ պետք է տալ նաև բնագիտական գիտելիքների ժողովրդականացմանը՝ ակումբներին և խրճիթներին կից համապատասխան խմբակները կազմակերպման, նրանց աշխատանքների ղեկա-

վարման, համապատասխան դասագրքերի, բրոշյուրների և դասագիրքների հրատարակման միջոցով: Գտնելով վոր բնագիտական գիտելիքների ժողովրդականացումը հանդիսանում է ամենասարմատական և ռացիոնալ մեթոդ հակակրոնական պրոպագանդայի ասպարիզում՝ պետք է տանել վերջինս նաև «անասովածնների» բժիշկների կազմակերպման և նախապաշարունների դեմ պայքարելու միջոցով՝ հրատարակելով համապատասխան բրոշյուրային գրականություն և նոր կենցաղը խորացնելով բանվորի և գյուղացու առօրյա կյանքում (կարմիր կրնունք, ժողովրդական և հեղափոխական տոներ կայլն):

9. Ամեն մի առաջադիմություն մեր արդյունաբերության ինդուստրիալիզացիայի և գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայի ասպարիզում անհրաժեշտորեն կապված է բանվորագյուղացիական լայն մասսաների կուլտուրականության աճման հետ: Այդ պատճառով պետք է խոշոր ուշադրություն դարձնել յերկրի կուլտուրականության բարձրացման վրա, սխտեմատիքորեն համառ պայքար մղել յերբորդ ճակատում: Մեր ամենախոշոր չարիքն այս ասպարիզում՝ դա այրբենական մեծ անգրագիտությունն է լայն մասսաների, այլ և վորոշ չափով կուսակցության ու կոմյեբիտմիության անդամների ու թեկնածուների շարքերում: Պետք է միջոցներ ձեռք առնել Քաղուսգլխվարի պլանը Հայաստանի խորհրդայնացման տաննամյակին վերացնելու անգրագիտությունն ազգարնակության մեջ իրականացնելու համար:

10. Պետք է լրագիրն ու գիրքը գյուղ հասցնել և հասկանալի դարձնել մեր բանվորի և գյուղացու համար: Այս հանգամանքը պահանջում է խոշոր ուշադրություն պոպուլյար բրոշյուրային գրականության հրատարակման և գրադարանային գործի կազմակերպման ասպարիզում: Խճիթ-վարը, գրադարանապետը, գյուղական ուսուցիչը և ազրոնումը կուսակցության ղեկավարության ներքո գյուղում սոցիալիստական շինարարության և լենինիզմի պետական պրոպագանդայի գաղափարների մասսայականացնող են հանդիսանում:

11. Կուսակցության, կոմյեբիտմիության, պիոներների, աշակերտության և լայն մասսաների քաղաքական դաստիարակման գործը պետք է տարվի լենինիզմի վրդով: Անհրաժեշտ է լենինիզմի պրոպագանդայի կազմակերպչական ձևեր և մեթոդներ մշակել՝ հարմարեցնելով վորոշ աուդիտորիայի. հրատարակել Աենինի ամենակարեկիր յերկերը, այլև պոպուլյար գրականություն Աենինի և լենինիզմի մասին:

12. Սխտեմատիք մասսայական ագիտացիայի հետ միասին

պետք է վորոշ տեղ տալ անհատական և խմբակային ազխտացիա-
յին: Վերջինս պետք է միջոց ծառայի կուս. ընկերներին ազխ-
տացիայի գործի մեջ գրավելու, բանվորի և գյուղացու կա-
րիքները ուսումնասիրելու և նրանց մեր քաղաքականությանը
մասնակից դարձնելու համար:

13. Անհրաժեշտ է կանոնավորել նաև շեֆական աշխատանք-
ների ղեկավարությունը: Պետք է շեֆ-հանձնաժողովներից անցնել
շեֆական ընկերությունների սխտեմին: Վերջիններս պետք է
կազմակերպվեն խոշոր բանվորական կենտրոններում:

14. Ազխտ բաժինները պետք է գաղափարորեն ընդգրկեն
Լուսժողովմատի և նրա առանձին վարչությունների աշխատանքը,
հետևելով կոմունիստական գաղափարախոսության խորացմանը
ժողովրդական լուսավորության ասպարիզում: Անհրաժեշտ է ա-
պահովել Ազխտպրոպաների ղեկավարությունը պրոպետարական գը-
րականության և զեղարվեստի զանազան ճյուղերի նկատմամբ՝
հիշյալ հարցերը պարբերաբար լուսարանելով մամուլի եջերում,
կազմակերպելով հատուկ խորհրդակցություններ և կանոնավոր
աշխատանք տանելով՝ Կենտկոմի Ազխտբաժինի կից գոյություն ու-
նեցող համապատասխան հանձնաժողովներում:

15. Սոշոր ուշադրություն դարձնել բոլոր ձևի և աստիճան-
ների խորհրդային դպրոցների վրա: Ուշադրության կենտրոն
դարձնել հասարակագիտական դիսցիպլինաների դասավանդումն
այդ դպրոցներում, ապահովել նրանց կոմունիստ դաստուռներով,
վերաքննել ծրագրները և ընդհանրապես արտադպրոցական և քաղ-
լուավարական աշխատանքներին հետևել աշխատանքային և բար-
ձրագույն դպրոցներում:

16. Անհրաժեշտ է պրոֆեսսիոնալ և գյուղատնտեսական
տարրական ու միջնակարգ դպրոցների այլ և գյուղյերիտ դպրոցնե-
րի յեղած ցանցը վոչ միայն ապահովել, այլև ընդլայնել՝ նրանց
կրթական դաստիարակչական բովանդակությունը համաձայնեցը-
նելով մեր արդյունաբերության և գյուղատնտեսության վերելքի
պահանջներին:

17. Ծանաչելով կիևոն մասսաների քաղաքական դաստիա-
րակության հզոր զենքերից մեկը՝ Կենտկոմի Ազխտբաժինի կից
կիևո-կոմիսսիայի միջոցով ոգտագործել վերջինս մեր գյուղում
հնարավոր շրջանակներում ընդլայնելու շրջիկ կիևոների ցանցը,
ապահովել նրանց հեղափոխական, գիտական և գյուղատնտեսա-
կան ֆիլմերով, այլև կազմակերպել ստանցիոնար կիևոների բանա-
կումբներին կից: Ուշադրություն դարձնել Հայաստանի կիևո-ար-
տագրությունը գարգացնելու վրա:

18. Մեր սիստեմատիք ազիտացիայի շրջանի մեջ մտնում է նաև խորհրդային հասարակայնության ցուցահանումը: Այս ապարիզում անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների (ՄՈՊՐ-Ալիոքթիմ, «Կորչի անգրագիտությունը», «անապատան յերեխա բարեկ» ընկ. կայն) ըջիջների աճեցման կազմակերպչական աշխատանքներից անցնել դեպի խորացրած ազիտացիա և պրոպագանդա՝ ձգտելով այդ հասարակական կազմակերպությունների ժողովրդականացմանը, այլև նյութ ունենալով վերջիններին հետ կապված բոլոր հարցերը, ինչպես որինակ միջազգային պրոլետարիատի պայքարը, ավիացիայի և քիմիայի նվաճումները, պայքար յերրորդ ձախտում, սոցիալիստական հանրապետություն պաշտպանությունը կայն:

19. Կուսգաստիարակություն հարցում անհրաժեշտ է նախ և առաջ լիովին իրազործել միասնական կուսգաստիարակչական ցանցը՝ սահմանելով այն անձնավորությունների կատեգորիան, վորոնց համար պարտադիր է լիկկայանների, կիսապրագեանների դպրոցների, շրջիկ և քաղզպրոցների հաճախումը: Վոչ մի շեղում այս ցանցից չը պետք է թույլ տալ:

20. Գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել տարրական քաղզաստիարակության վրա: Անկավարներ պատրաստելով, ծրագրները հիմնավորելով տեղական կյանքի մատերյախներով, համապատասխան դասադրքեր և (խրիստոմատիա) ծաղկաքաղեր հրատարակելով, դասական և ցուցադրական պիտույքներ մատակարարելով և վոր գլխավորն է՝ ապահովելով քաղզաստիարակչական ցանցի նյութական բազան քաղլուսվարների նախահաշվով և այդ ցանցի մեջ տեղ տալով կոմյերիտականին: Կին պատգամավորուհուն և ակտիվ բանվորին ու գյուղացուն, մենք կարող կը լինենք խոշոր չափով նպաստել քաղաքական անգրագիտություն վերացման գործին:

21. Քաղզաստիարակչական աշխատանքների մեջ հատուկ տեղ պետք է բունն կուսխորհրդային դպրոցները: Անհրաժեշտ է ավելացնել վերջիններին ցանցը և նրանցում խրճիթվարներ և գյուղական պրոպագանդիստներ պատրաստելու գիծ: Պետք է կազմակերպել նաև յերեկոյան կուսխորհրդային դպրոցներ խոշոր գավկենտրոններում, վորոնք նպատակ ունեն բարձրացնելու բանվորի քաղաքական պատրաստականություն ընդհանուր մակարդակը, առանց նրան կտրելու իր ընթացիկ աշխատանքներից:

22. Կուսգաստիարակչական ցանցի հետ զուգահեռ պետք է ուշադրություն դարձնել նաև առարկայական խմբակների և դասընթացների վրա, վորոնք նպատակ ունեն վորակյալ աշխա-

տալօրններ պատրաստել տնտեսական, խորհրդային, կոոպերատիվ, կուսակցական, պրոֆեսիոնալ և կուլտուրական շինարարութեան ասպարեզներում:

23. Կուսակաթիվի դաստիարակութեան գործը ապահովում է նախ և առաջ վերջինիս թեթեւացումը ընթացիկ տնտեսաշինարարական աշխատանքներից: Պետք է կազմակերպել անհրաժեշտ քանակով լենինիզմի ուսումնասիրութեան խմբակներ՝ ապահովելով այդ խմբակները ղեկավար ուժերով, ծրագրներով, գրականութեամբ և այլն:

24. Ղեկավար վոչ-բավարար կազմը, մեր քաղցաստիարակչական ցանցի անբավարար նյութական ապահովութեանը և գյուղերի ցրվածութեանը քաղցաստիարակչական աշխատանքների գլխավոր մեթոդներից մեկը դարձնում են նաև ինքնազարգացման աշխատանքները: Անհատ ընկերների և ինքնազարգացման խմբակների կազմակերպումով, կոնսուլտացիոն բյուրոների պլանային աշխատանքով և համապատասխան գրականութեան հրատարակումով մենք կարող կը լինենք խոշոր չափով նպաստել լայն մասսաների կուլտուրական վերելքին՝ գլխավոր ուշադրութեան դարձնելով առաջին հերթին յերիտասարդութեան վրա:

25. Ագիտացիայի և պրոպագանդայի բովանդակութեանը պետք է կազմի նաև ռազմական պրոպագանդան: Ռազմական անկշտենների կազմակերպում ակումբներին և խրճիթներին կից, համապատասխան գրականութեան հրատարակում, լայն մասսաների և առաջին հերթին կուսակցութեան և կոմյերիտմիութեան ռազմականացում, յերկրային գորամասերի և նախազինակազմների մեջ տարվող քաղվուսվարական աշխատանքների նպաստում, ավելի սերտ կապ քաղբաժինների հետ և բավարար ղեկավարութեան բանակում տարվող ագիտպրոպ աշխատանքների նկատմամբ — անհատային հարցերը, վորոնք պահանջում են ագիտ-պրոպ մարմինների ուշադրութեանը:

26. Ագիտբաժինները պետք է ել ավելի խոշոր ուշադրութեան դարձնեն մամուլի վրա, այս ասպարեզում նախ և առաջ պիտի ապահովել կուսակցութեան գաղափարական ղեկավարութեանը ուժեղացնելով թերթերի համապատասխան բաժինները և յայն տեղ տալով վերջիններումն տեղական կյանքին: Սրա հետ միասին պետք է նաև ուժեղացնել ղեկավարութեանը բան. և գյուղ. թղթակիցների և պատի լրագրերի նկատմամբ: Կենտկոմը պետք է նախապես քննի Պեհհրատի հրատարակչական պլանը և ապահովի նրանում քաղաքական, բրոշյուրային գյուղատնտեսական գրականութեան և քաղցաստիարակչական ցանցի համար գրասպարեզների հրատարակումը:

27. Կենսակոմի որդան «Կոմունիստ»ը պետք է դարձնել ավելի մասսայական, հարմարեցնելով նրա բովանդակությունն ու լեզուն մեր բլիշներին ակտիվին: Միաժամանակ անհրաժեշտ է «Կոմունիստ»-ի գրագարան անվան տակ հրատարակել նաև համապատասխան գրականություն՝ կուսակցության բարձրագույն մարմինների վորոշումների շուրջը:

28. Անհրաժեշտ է խոշոր ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների աշխատողների կազմ պատրաստելու համար, ինչպես համապատասխան առարկայական դասընթացները բանալու, նույնպես և ՍՍՀՄ ալլ հանրապետությունները բնկերներ գործուղելու միջոցով, այլև բարձրացնել քաղաքատիրակազան աշխատանքը ազգային փոքրամասնությունների մեջ:

29. Սոշոր ուշադրություն դարձնել նաև ազգային փոքրամասնության կուլտուրական մակարդակի բարձրացման վրա, վորի համար՝

ա. Պատրաստել և վերապատրաստել ուսուցիչներին, խըրճիթվարներին և ընդհանրապես ժողովրդական լուսավորություն շարքային աշխատողներին:

բ. Լայնացնել խրճիթների ցանցը և համապատասխան ձևով խորացնել աշխատանքը նրանցում:

գ. Ուժեղացնել ազգային փոքրամասնության գյուղերին գյուղատնտեսական, քաղաքական, մանկական և ալլ գրականություն մատակարարումը՝ մայրենի լեզվով:

դ. Բանալ գյուղացիական յերիտասարդություն դպրոցներ:

յե. Անհրաժեշտ գտնել նոր յեղիղական ալլուրենի մշակումը, վորի բացակայությունը արգելադիթ խոշոր հանգամանք է յեղիղական ազգաբնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը յերկրում առաջ բերեց տնտեսական վերելք: Մի շարք ճյուղերում մեր տնտեսությունը աճել է նախապատերազմյան շրջանից: Տնտեսության ուրիշ ճյուղերը նախապատերազմյան շրջանին դեռ չեն հասել: Ընթացիկ տարում մեր տնտեսությունը ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը: Տնտեսության բարձրացումն առաջադրում է մեզ արագացնելու ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերի զարգացու-

մը, ներկայումս կուսակցութեան համար իր ամբողջութեամբ զրկում է այն խնդիրը, վոր ավելացվեն մեր տնտեսութեան մեջ սոցիալիստական ելեմենտները, ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում, վորի համար համագումարն առաջարկում է ձեռք առնել մի շարք տնտեսական ձեռնարկումներ:

2. Համագումարը գտնում է անհրաժեշտ ձեռք առնել միջոցներ ուսումնասիրելու մեր տնտեսութեան զարգացման հեռանկարները՝ համապատասխան տնտեսական սայնիլզացիայի տեսակետից և մտցնել հերթականութեամբ պլանային աշխատանքները միջոցով այն բոլոր ձեռնարկումների համար, վորոնք համաձայն Կոմկուսի հիմնական խնդիրների՝ պիտի գործադրվեն Հայաստանի ժողովրդական տնտեսութեան սեկտորաւիցիայի գործն իրականացնելու համար:

3. Համագումարը գտնում է անհրաժեշտ, վորպեսզի հիշյալ խնդիրները կիրառելիս լիովին և սերտ կապ ստեղծվի Անդրկովկասի և Միւթեհական հանրապետութեանների հետ, զրա համար հաշվի պիտի առնել գրեթէ յուն ունեցող տնտեսական սերտ կապերը և խնդիրների ընդհանրութեանը: Այդ նպատակով անհրաժեշտ է Անդրկովկասյան ժողանախորհի կազմակերպումը վորպես գեկավար որդանի: Կուսակցութեանը պիտի վճռի այդ հարցը առանց հապաղման, վորպեսզի հնարավոր գտնա մեր արդշունարեական շինարարութեանը պլանային և գործնական կերպով շաղկապելու մեր հարևան հանրապետութեանների արդշունարեութեան զարգացման հետ:

4. Գյուղատնտեսութեան բնագավառում համագումարն առաջարկում է հետևյալ խնդիրները. — ա) Գյուղատնտեսութեան ինտենսիֆիկացիան և առանձնապես նրա ապրանքային ճյուղերում, առանց վորի անհնար է մեր գյուղատնտեսութեան հետագա զարգացումը և լայն գյուղացիական մասսաների տնտեսական զրութեան բարելավումը: Իրա համար անհրաժեշտ է կազմել կենդանի և մեռյալ գյուղատնտեսական ինվեստարի, հնարավոր կարճ ժամանակվա ընթացքում, վերականգնելու պլանը և ընդունել մի շարք գործնական միջոցներ՝ հիշյալն իրականացնելու համար:

բ. Իրրիկացիայի լայնացման և ջրառգատագործման կանոնավորման խնդիրները: Մոտ ապագայում (տարիներում) հերթով ու պլանով սասնյակ հազարավոր գեսայտին անջրդի հողամասեր պիտի մտցվեն ժողովրդական տնտեսութեան մեջ: Սոչոր իրրիկացիոն աշխատանքների հետ միաժամանակ հատուկ ուշադրութեան պիտի դարձնել սակավահող և խիտ ազգաբնակչութեան ունեցող շրջաններում ավելի վորքը իրրիկացիոն աշխատանքների

վրա. բացի այդ, պիտի կանոնավորել գոյություն ունեցող իրրի-
գացիայի սիստեմը: Համաձայն նոր հողաշինարարութեան և մեր
հողային կողեկախ՝ պետք է ուսումնասիրել և պատրաստել ջրային
նոր կանոնադրութեան (պրոփենիչե)՝ հին, սովորական ջրային
կանոնի փոխարեն, վորը չի համապատասխանում գյուղատնտեսու-
թեան ներկա պայմաններին և սակավունակ գյուղացիութեան
տնտեսական շահերին:

դ. Անհրաժեշտ է մոտազա յերեք տարվա ընթացքում Հա-
աստանում վերջացնել հողաբաշխման աշխատանքները և ձեռք
առնել բոլոր անհրաժեշտ միջոցները արագացնելու հողաշինար-
արութեանը (նաև արտաշինարարութեանը):

դ. Հատուկ ուշադրութեան դարձնել այն շրջանների վրա,
վորոնք քայքայվել են համաշխարհային պատերազմի և ազգա-
միջկան կոիվների ընթացքում, նաև նոր բնակութեան հաստատող
ազգաբնակչութեան վրա՝ մատակարարելով հիշյալներին, առաջին
հերթին, անհրաժեշտ ինվենտար և անտառանյութ:

յե. Գաղթականութեան խնդրում հավանութեան տալով
կենսկոմի բունած գծին, համագումարն առաջարկում է առաջի-
կայում ևս գաղթականների ընդունելութեան խնդիրը կապել
նրանց տեղավորելու ուսալ հնարավորութեանների հետ՝ ըմբռնե-
լով արտասահմանից ներաւորող բանավորների, գյուղացիների և
արհեստավորների գաղթականութեանը, վորպես գյուղատնտեսա-
կան արդյունարբութեան ներգաղթ, համագումարն առաջարկում
է գաղթականների ընդունելութեանը սերտորեն շագկապել յերկրի
տնտեսական կարիքների և զարգացման հեռանկարների հետ և
զրա համեմատ՝ պետական խիստ պլանաշափութեան մտցնել
գաղթականութեան ներառման և տեղավորման գործի մեջ:

զ. Անհրաժեշտ է անցկացնել գյուղհարկի թեթևացումը, վո-
րի համար նրան ալիլի մոտեցնել պրոգրեսսիվ յեկամտային հար-
կին. հարկազրման ընթացքում հաշի առնել առանձին շրջանների
տնտեսական ուժը և գյուղական տնտեսութեան զրութեանը, բա-
ցի այդ, կանոնավորել հաշվառման տեխնիքան, գանձիլիք տուր-
քերի բաշխումը և արտոնութեանների կիրառումն:

ե. Միանգամայն անհրաժեշտ է ներկա բյուջետային տա-
րում ստեղծել գալառակային (շրջանային) բյուջի, վորը պիտի
ունենա յեկամուտների և յեկամտային մասհանումների կայուն
նոմենկլատուրա այնպես, վորպեսզի բալարարվեն տեղական ծախ-
քերը: Պետք է ձեռք առնել միջոցներ ալիլացնելու բյուջեյի վոջ
հարկային յեկամուտները:

5. Գյուղատնտեսութեան զարգացման աւթիվ վերոհիշյալ

թված միջոցներից բացի, միաժամանակ վճռական նշանակու-
թյուն ունի գյուղատնտեսութեան զարգացման համար գյուղա-
տնտեսական ապրանքային հում նյութի վերամշակման գործը
(պետական և կոոպերատիվ միջոցներով), այսինքն գյուղատնտեսա-
կան արդյունաբերութեան ստեղծումը:

6. Գյուղատնտեսութեան յեկամուտների ավելացման գոր-
ծում վերոհիշյալ միջոցների հետ միաժամանակ հսկայական կա-
րեվորություն ունեցող խնդիր և դառնում այն, վոր շուկայի պայ-
մաններին հարմարվող, ճիշտ և ճկուն կազմակերպություն ստեղ-
ծվի գյուղատնտեսական ապրանքային հում նյութերի և վերամը-
շակված պրոդուկտների սպառման գործը կազմակերպելու համար
յերկիր ներսում և գրտում: Պետք և վերացնել պետական և կոոպե-
րատիվ կազմակերպութեանների անճկունությունը և վորոշ ան-
փորձությունը: Վորպեսզի կուսակցութեանը համար գյուղատնտե-
սութեան հետագա վերելքի և քաղաքի ու գյուղի կապի կարեվոր
բնագավառում պահանջվող հաջողութեաններին՝ անհրաժեշտ և
հիշյալ կազմակերպութեանների շրջանառութեան և վարկային մի-
ջոցների պակասութեանը վերացնել:

7. Գյուղատնտեսական պրոդուկտների սպառման գործի
հետ սերտ կերպով կապված և գների խնդիրը: Անհրաժեշտ և ըս-
տեղծել գյուղատնտեսական պրոդուկտների ուսալիցացիայի համար
այնպիսի պայմաններ, վորոնք հնարավոր զարձնեն տնտեսութեան
ամրապնդումը և հետագա զարգացումը: Այդ հնարավոր և այն
գնպքում, յեթե չքավոր ու միջակ գյուղացիութեանն ակտիվ
մասնակցի կոոպերացիայի աշխատանքներին և վերացվեն այն մի-
շարք թերութեանները (վերագիր ծախքերի աճումն), վորոնք գո-
յություն ունեն կոոպերատիվ շինարարութեան և պետական առեվ-
տրրի մեջ:

8. Համագումարը հավանութեան և տալիս գյուղատնտեսու-
թեան զարգացման զուգահեռ յերկիրը ինդուստրալիզացիայի յեն-
թարկելու քաղաքականութեանը: Մեր լինային հարստութեաննե-
րի և գյուղատնտեսական հում նյութերի վրա հենված արդյունա-
բերութեանը, ելկերոֆիկացիայի միջոցով, կուսակցութեանը հը-
նարավորութեան կտա հաղթահարելու այն առանձնահատուկ զրթ-
վալութեանները, վորոնք գտնվում են Հայաստանի սոցիալիստա-
կան շինարարութեան ուղիների վրա: Այդ նպատակով պիտի ա-
բագացնել և կիրառել ՀԿԿ(Բ)ԿԿ պլենումի և խորհուրդների 3-րդ
համագումարի վորոշումները՝ արդյունաբերութեան հիմնական կա-
պիտալի վերարտադրութեանը, նոր արդյունաբերական ճյուղերի
զարգացումը, վորակյալ բանվորական ուժերի և մասնագետների

ածեցումը, արդյունաբերական ապրանքների գների իջեցումը
և այլն:

9. Տեղական բյուջեյի վոչ հարկային յեկամուտների ավել-
ացման նպատակով՝ անհրաժեշտ է հարկավոր ուշադրութուն
դարձնել տեղական կոմունալ անտեսութունների և տեղական
արդյունաբերության զարգացման վրա՝ վերադարձնելով տերերին
տեղական բնույթ կրող ձեռնարկները, բացի այդ, անհրաժեշտ է
միջոցներ ձեռք առնել զարգացող քաղաքների բնակարանա-
յին շինարարությունն ուժեղացնելու:

10. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր անհրաժեշտ
է գյուղական անտեսութունները մտցնել յերկրի ընդհանուր
անտեսական շրջանառության մեջ, համագումարը կուսակցության
ուշադրութունը հրավիրում է մեր յերկրի ճանապարհների հա-
ղորդակցության վոչ կանոնավոր և հարկավոր զարգացման վրա,
վորի համար առաջարկում է ճանապարհների շինարարության
աշխատանքներն ուժեղացնել՝ հատկապես հետավոր վայրերում:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

1. ՆեՊ-ի պայմաններում գյուղացիական անտեսության ա-
վելի ու ավելի բարձրանալու հետևանքով, մեր գյուղը բնականաբար
յենթակա յե սոցիալ-անտեսական շերտավորման: Տնտեսականապես
անխուսափելի յե դառնում է կուլակային շերտի և ունեվոր գյուղա-
ցիության խմբակների առանձնացումը գյուղում: Մեր գյուղը
ներկայումս կարելի յե բաժանել մի կողմից գյուղական բուրժու-
ազիայի, մյուս կողմից միջակների, չքավորների և բաղրակների:

2. Այս շերտավորման հիման վրա գյուղում առաջանում է
պայքար նրա առանձին շերտերի միջև: Գյուղական բուրժուազիան
թշնամի լինելով սոցիալիստական անտեսավարության, պայ-
քար է մղում չքավորության հետ, վորի շահերը հիմնականում
համապատասխանում են բանվոր դասակարգի շահերին: Պայքարը
մղվում է միջակ գյուղացիության համար, վորի վրա ազդելու
ձգտում են գյուղական բուրժուազիան:

3. Կապիտալիզմից դեպի սոցիալիզմի անցնելու անցողական
շրջանում, կոմունիստական կուսակցութունը գիտակցելով գյու-
ղացիության հեղափոխության մեջ ունեցած դերի կարեւորությունը,
պետք է կարողանա տանել այնպիսի քաղաքականութուն, վորն
ապահովելու յենրա հաղթանակը և այս տեսակետից դեպի գյուղի գա-
նազան շերտերն ունեցած ճիշտ վերաբերմունքի հարցը, վորպես

գյուղում սոցիալիստական տարրերի ուժեղացման և գյուղացիական ընդհանուր մասսայի անտեսութունը սոցիալիզմի հունի մեջ ուղղելու մի հարց, ստանում և առաջնակարգ կարեւորութուն:

4. Անհրաժեշտ և մի անգամ ևս հիշեցնել, վոր չքավորութունն ու բտորակները գյուղում հանդիսանում են բանվոր դասակարգի անմիջական նեցուկը և նրա պահեստը (ուղեւոր): Սակայն կոմունիստական կուսակցութունը չի կարող հավատացած լինել իր հաղթանակին, յեթե չքավորի և միջակ գյուղացիութեան ամուր դաշինքը գյուղում ապահոված չլինի: Առանձնապէս կարեւոր նշանակութուն և ստանում այն հարցը, վոր մեր պաշարի ընթացքում անհրաժեշտ և, վոր կուսակցութեան և բանվոր դասակարգի կողմը լինի միջակ գյուղացիութունը — գյուղական նշահիմնական մասսան: Անհրաժեշտ և գտնել բոլոր տեսակի միջոցները կենակցելու (ужитьсѧ) միջակ գյուղացիութեան հետ: Միայն բանվոր դասակարգի և միջակ գյուղացիութեան սերտ դաշինքով կուսակցութունը կարող և չեզոքացնել կուլակային տարրերին գյուղում:

5. Այս տեսակետից միատեսակ չափով բացատրական յերեւոյթներ են կուսակցութեան մեջ մի կողմից բուռնցքային տարրերի կողմից սպառնացող վտանգի թերազնահատութունը, մյուս կողմից միջակ գյուղացիութեան գերի թերազնահատութունը: Այս յերեւոյթների դեմ կուսակցութունը պետք և մճուական կրօնով մղի:

6. Կազմակերպելով չքավորութունը կուսակցութեան շուրջը, հաշիւ աննելով բուռնցքային վերնաշերտի ամման վտանգն ու միջակ գյուղացիութեան համար մղվող պաշարի ամբողջ նշանակութունը, անհրաժեշտ և զարգացնել գյուղում տարվիւր հասարակական, կուլտուրական և նշույթական ոգնութեան աշխատանքները:

Յեղնելով գրանից անհրաժեշտ և.

ա. Առանձին ուղղութիւնը դարձնել, վոր գյուղի հասարակական աշխատանքներին լայն կերպով մասնակցեն չքավորներն ու միջակները: Իրա համար, համաձայն Ռեկկի-ի վորոշման, խորհուրդների, փոխուղեւորի և կոպերացիայի հետագա աշխատանքների ընթացքում կիրառել չքավորութեան առանձին ժողովներ, կազմակերպել չքավորների խմբակներ, ամեն կերպ ձգտելով վոր գյուղիտորդի փոխուղեւորի և կոպերացիայի գործնական ձեռնարկութեանները կյանքում կիրառվեն միջակների հետ համագործակցելով, ինչպէս և վերընտրութեանների միջոցին առայադրել նրանց հետ միասին ընդհանուր թեկնածուներ: Անհրա-



ժեշտ և չքավորութեան ժողովներն ու խմբակները կազմակերպել և այն ուսյոններում, վորտեղ ավելի զարգացած են սպորանքա-փողային հարաբերութեանները, այնպիսի զգուշութեամբ սակայն, վոր միջակ գյուղացիութեանը չը հեռացնեն չքավորից, այլ ընդհակառակը՝ նրանց միջոցով կապեն միջակներին չքավոր գյուղացիութեան հետ:

բ. Առանձին ուշադրութեան արժանի գարձնել գյուղի կոոպերացիայի վրա: Մեր նվաճումներն այդ ուղղութեամբ դեռ բավարար չեն: Հարկավոր և հիշել, վոր պրոլետարիատի գիլատատութեան շրջանում սոցիալիզմի համար միզով պայքարում կոոպերացիան գյուղում ունի վճռական նշանակութեան: Անհրաժեշտ և դարկ տալ կոոպերատիվ կազմակերպութեանը հետամնաց շրջաններում, հարկավոր և առաջադրել մոտիկ ապագայում սոցիալական գյուղատնտեսական կոոպերատիվ կենտրոնների կազմակերպման խնդիրը, ինչպես գինեգործութեան, բամբակագործութեան, Հայգյուղկոոպի ընդհանուր ղեկավարութեան տակ:

Անհրաժեշտ և նորից ուշադրութեան դարձնել ստորին կոոպերացիայի ղեկավար կազմի վրա (առանձնապես գյուղատնտեսական կոոպերացիան): Հարկավոր և ապահովել կոոպերացիայում կոոպերատիվ դեմոկրատիայի կիրարկութեանը:

Կուսակցութեան լրիակատար ոգնութեան և անշեղ ղեկավարութեան— ահա մեր կազմակերպութեանների առաջ զրկած խնդիրը: Կոոպերացիայի մի ճյուղը— տնայնագործական-արդյունաբերական կոոպերատիվը մեր կուսակցութեան ուշադրութեան կենտրոնը չի չեղել: Մեր յերկրի ազգարային դերարնակչութեան միջոցին կոոպերացիայի այս ճյուղը պետք և կուսակցութեան հատուկ ուշադրութեան կենտրոնը դառնա: Կենտկոմին անհրաժեշտ և վճռական միջոցներ ձեռնարկել Հայաստանում տնայնագործական-արդյունաբերական կոոպերացիայի կազմակերպութեան համար:

Կոոպերատիվ աշխատանքում անհրաժեշտ և կուսակցութեան ուշադրութեանն ուժեղացնել այն ուղղութեամբ, վոր չքավորութեան մուտքը կոոպերացիան հեշտանա:

գ. Ընդգծելով անբավարար ուշադրութեանը դեպի փոխոցնութեան կոմիտեները, կուսակազմակերպութեանները կուսակցութեան փորձումների հիման վրա պարտական են ընձեռնել բոլոր միջոցները, վերացնելու փոխոցկոմիտեների դերի թերազնահատութեան յերևույթները:

Հայկենագործկոմի ղեկրիտի հիման վրա կուսակցութեանը պարտական և ամեն կերպ աջակցել փոխոցկոմիտեներին նրանց աշ-

խատանքի մեջ, դարձնելով նրանց գյուղացիութեան, մանաւանդ նրա չքավոր շերտերի իսկական ուղեւթեան որդաններ:

դ. Առանձին կարեորութեան և ստանում Հողանտառ միութեան աշխատանքը, վոր զեւ չի կարողացել արժանանալ կուսակցութեան ուշադրութեանը:

Գյուղի ամենաչքավոր կիսապրոլետար տարրերի, վորոնց հիմնական պարագմունքը կայանում և վարձու աշխատանքը, դաշինքն ամեն կերպ կամրացնի իր միութեան անդամների կապը քաղաքի բանվորների հետ:

Այդ նպատակով անհրաժեշտ և, վոր կուսակցութեանն աջակցի այդ միութեանը, ինչպես նյութական միջոցներով, նույնպես և աշխատավորներով:

ԲԱՆԱԶԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԿԿ 4-րդ Համագումարը լսելով Կենտ. Վերստուգիչ Հանձնաժողովի զեկուցումը վորոշեց հաստատել այն:

ԲԱՆԱԶԵՎ Հ.Կ.Կ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի նախագահ քնն. Մարտիկյանի զեկուցումը Կ. Վ. Հանձնաժողովի գործունեութեան մասին 4-րդ համագումարը վորոշեց՝

1. Հալանութեան տալ Կենտ. Վերահսկիչ Հանձնաժողովի գործունեութեան և նրա քաղաքական գիծը համարել ուղիղ:

2. Կենտ. Վերահսկիչ Հանձնաժողովի և Բան.-Գյուղատեսչութեան միացման լիակատար իրագործումը կուս. մարմիններին ընդունած վորոշումների հիմունքներով գտնել անհրաժեշտ:

3. Անհրաժեշտ համարել զալառական կազմակերպութեաներին կից ունենալ Կ. Վ. Հանձ. լիազորներ՝ հեղինակավոր և փորձված քննիչներին:

4. Հաստատել, վոր ՀԿԿ վոչ պրոլետարական կազմի ստուգումը կատարվել և ժամանակին և ունեցել զբաղան հետևանքներ, ինչպես կուսակցական մասսայի հետաքրքրութեանը զեպի կուսակցական կյանքը թարձրացնելու գործում, նույնպես և նրա ատողջացման գործում:

5. Կուս. կազմակերպութեանները լուրջ ուշադրութեամբ դարձնել ստուգման արդյունքների անշեղ և անհապաղ իրագործման վրա:

6. Կ. Վ. Հանձնաժողովի ուշադրութեանն ավելի մեծ չափով դարձնել պետական ասպարատի բարելավման գործի վրա:

ԿՈՒՍԿՈՒԼԵԳԻԱՅԻ ԳԾՈՎ

Շարունակել ծրագրային և խորացրած աշխատանք կուս. կազմակերպութեանները հիմնական յերևույթները ուսումնասիրելու և ձեռք առնել կարուկ միջոցներ նրանց լիկվիդացիայի համար:

Անհրաժեշտ համարել գյուղական բջիջների սիստեմատիք և ծրագրային հետադուրսութեանը, ինչպես և արտագրական բջիջների դրութեան ուսումնասիրութեանը: Կուս. պատասխանատուութեան յենթարկվող ընկերների վերաբերյալ տանել զգուշացում և դաստիարակչական աշխատանք:

Ռեժեղացնել կուսատենակալների մասնակցութեանը կուս. կուլիգիայի աշխատանքներում:

Ռեժեղացնել կենդանի և գրավոր կապը հայկական դիվիզիայի և 3-րդ դիվիզիայի կուս. հանձնաժողովների հետ:

Ապահովել Բան.-Գյուղտեսչութեան անհրաժեշտ միջոց՝ նրա աշխատակիցների վորակյալ կազմի բարձրացման և նրա առաջ կանգնած խնդիրների լրիվ կատարման համար:

Ի հաշիվ ծրագրային և արտածրագրային խնդիրների կըրճատման բարձրացնել հետադուրսների վորակը և արդյունքների սեւիդացիան:

Բանվորագյուղացիական Տեսչութեան վերցրած ուսցիտնակիցատորական գիծը համարել ճիշտ և առաջարկել նրան ռեժեղացնել այդ ուղղութեամբ տարվիւիք աշխատանքները:

Բարձրացնել Բանվորագյուղացիական Տեսչութեան հեղինակութեանը մամուլի և բանավոր գեկուցումների ու յերևույթները միջոցով լայն մասսաների մեջ:

ԲԱՆԱԶԵՎ ՀԱՄԽ-Ի ՖՐԱԿՑԻԱՅԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Կսելով ՀԱՄԽ-ի ֆրակցիայի գեկուցումը՝ ՀԿԿ 4-րդ Համագումարը արձանագրում է, վոր յերկրի տնտեսութեան ամման և վերելքի հետ միասին տեղի ունեցավ նաև արհմիութեանները կազմակերպչական ամրացումը: Այդ ամրացումը արտահայտվում

և աշխատավորութեան նորանոր խմբերի և շերտերի ընդգրկումով, միութենականների ազամների գրավումով միութենական աշխատանքի մեջ և նրանց ակտիվութեան ցուցահանումով, բանվորների և ծառայողների նյութական և կենցաղային գրութեան համեմատական բարելավումով և կուլտուրական մակարդակի բարձրացման գործի առաջխաղացումով:

Սրա հետ միասին համագումարն անհրաժեշտ և գտնում հետազոտում արհմիութենականների աշխատանքների ավելի մոտեցումը միութենական անդամներին, միութենական գծի պարզաբանումը արտագրութեան մասնակցելու գործում, միութենական որդանների ուշադրութեան կենտրոնացումը բանվորների շահերի լայն պաշտպանութեան վրա, մասսայական աշխատանքի խորացումը, նույնպես և անդամների ավելի խոշոր քանակի գրավումը դեպի մասսայական պրոֆեսիոնալ աշխատանք՝ բանվորական ղեմավարտի սկզբունքների հիման վրա և աճող կուլտուրական պահանջների բավարարումը: Վերջինիցյալը իրագործելու համար համագումարը առաջարկում է՝

1. Հատուկ ուշադրութեան դարձնել դաստիարակութեան և նոր պրոլետարական ու կիսապրոլետարական ելեմենտների գրավման վրա դեպի միութենական աշխատանքը, գտնելով, վեր բանվորական ուժի պահանջը՝ նկատի ունենալով մեր արդյունաբերութեան հետագա աճումը՝ պետք է բավարարվի նախ և առաջ ի հաշիվ գործազուրկների և գյուղացիութեան հավելյալ բանվորական ուժի:

2. Նկատի առնելով միութենական մասսաների ակտիվութեան ճիշտ ոգտագործման և ընդլայնման անհրաժշտութեանը, մեծականտրեն անցնել ընտրութեանների պերտնալ սխտեմին, վերջ տալով նշանակելուն ու աշխատողների տեղափոխութեանը և խիստ հետեւելով ընտրողականութեան սկզբունքներին, ուժեղացնել հաշիվութեանը մասսաների առաջ, մանավանդ Ֆինանսականը. ընդարձակել ստորին բջիջների աշխատանքները, կենդանացնել ընդհանուր ժողովները՝ վերջիններիս քննութեան նյութ գործնելով գործնական հարցեր:

3. Ընդգծելով ազգային փոքրամասնութեանների թույլ մասնակցութեանը միութենական աշխատանքի մեջ և անկուսակցական բանվորականների, բանվորական յերիտասարգութեան և ուսանողութեան մեջ տարվող աշխատանքի համապատասխան բովանդակութեան բացակայութեանը՝ գրավել նրանց դեպի միութենական կազմակերպութեան բոլոր ողակները և խորացնել աշխատանքը նրանց մեջ: Անհրաժեշտ և նույնպես ուժեղացնել աշխատանքը—ճարտարագետական-տեխնիքական ուժերի մեջ:

4. Միութենական ազդեցությունը կարող է դյուզ համեմել առաջին հերթին Հողանտառ և սեզոնային բանվորներ ընդգրկող կառուցողների միությունների աշխատանքների միջոցով, վերջ ուշադրությունը պետք է դարձված լինի դեպի պրոֆաշխատանքի բոլոր ձևերի զարգացումը նրանց ամենամեծ կապի ժամանակամիջոցում արձմիության հետ: Փոնելով, վեր ներկայումս Հողանտառի հիմնական խնդիրն է ձեռք բերված գրավումների կազմակերպչական ամրացումը և աշխատանքի խորացումն ու ապամիայն անկազմակերպ բատրակների հետագա գրավումը, — Համագումարը հանձնարարում է Հ. Ա. Մ. Ս. — ի ֆրակցիային հոգալ ֆինանսական բազայի ստեղծման և բատրակների շարքերից աշխատողների համապատասխան կազրի ապահովման մասին:

5. Միջոցներ ձեռք առնել պրոֆաշխատողներին թեթևացնելու ամեն տեսակ տնտեսական և հասարակական պարտականություններից, վերոնք խանդարում են նրանց անմիջական աշխատանքներին՝ յերկրորդական տեղ են տալիս նրանց՝ անդամների տնտեսական շահերի պաշտպանության և նյութական և՛ մտավոր մակարդակի բարձրացման գործում:

6. Նպատակ ունենալով նկատելով վատնումների դեմ պայքարելը, այլ և ցանկանալով միջոցների խոշորագույն մասը ծախսել միության անդամների պրոֆեսիոնալ կարիքներին բաշարարելու համար, ուժեղացնել ալիլի բարձր կանգնած կազմակերպությունների, հսկողությունը ցածր կանգնածների նկատմամբ, մարսիումով կրճատել ապարատի ծախսերը՝ ընդհանրապես հետևելով միութենական միջոցների տնտեսելուն:

7. Լայն միութենական սկաիվ ստեղծելու համար աշխատանքի գրավել ստորին աշխատողների նոր ուժեր, գատտիարակելով նրանց գործնական աշխատանքի պրոցեսում միութենական կազմակերպությունների բոլոր ատտիճաններում:

8. Աշխատավարձի հետագա աճումը առաջ տանել արտադրողականության բարձրացման հետ գուզահետարար: Առաջին հերթին անհրաժեշտ է հետամնաց խմբերի աշխատավարձը բարձրացնել: Գործարքային վճարումներ մտցնել այն վայրերում, ուր դեռ չի մտցված, առանձնապես ուսումնասիրելով գործարքային վճարումները յերկաթուղազծում: Վերականհատումները պետք է կատարվեն միայն պայմանագրերով սահմանված ժամկետներում:

9. Նպատակ դնելով բանվորների և ծառայողների շահերի նյութական և կենցաղային գրության պաշտպանության բարեջավումը, — արագացնել աշխատանքային բնակարանային գատարաններում և կոնֆլիկտային որգաններում գործերի քննություն

ներ, ուժեղացնել կոտորացիայի աշխատանքները, անցկացնել ստորին և միջին կատեգորիաների պետծառայողների և բանվորների վարկավորումը: Համապատասխան որդանների ուշադրութեանը զարձնել գների կարգավորման և սպրանքների մատակարարման վրա:

10. Գտնելով, Վոր արտադրական հանձնաժողովները և խորհրդակցութեանները անտեսութեան շինարարութեան և բանվորներից անտեսավարների ազմինիտացիաների նորանոր կազմեր առաջ քաշելու լավագույն ձևն են հանդիսանում, ուժեղացնել այդ կոմիտեաների աշխատանքները՝ ուսումնասիրելով և համախմբելով նրանց վործը, ուղղելով սխալները, ապելի սերտ կապելով նրանց Բանգուղտեջութեան որդանների հետ:

11. Նկատի ունենալով վորակավորչայ բանվորական ուժի թուլութեանը, անհրաժեշտ գտնել բանվորների և ծառայողների վորակավորչայ պատրաստութեան և վերապատրաստութեան հարցերի լուրջ քննութեանը:

12. Հաշի սանելով գործադրութեան հարատև բնութիւնը, վորի պատճաններից մեկը գշուղից գշուղացիների մշտական հոսանքն է, միջոցներ ձեռք առնել վերջին յերևույթը կարգավորելու համար, ուժեղացնել գործադրիչներին ոժանդակութեան ցույց տալը՝ նոր աշխատանքային կողմերից և հասարակական աշխատանքներ կազմակերպելու միջոցով՝ սպահովելով վերջինս համապատասխան միջոցներով:

13. Նկատի առնելով բանվորների աշխատանքի պայմանների անբավարար վիճակը, վոր այնքան կարևոր և արտագրողականութեան բարձրացման և յեղած վորակավորչայ բանվորների կազմի պաշտպանութեան համար՝ ուժեղացնել մեր աշխատանքի պաշտպանութեան բարելավման աշխատանքները:

ԲԱՆԱԶԵԿ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ն Ե Ր Ա Շ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Խորհրդային Հայաստանի արտադրական ուժերի զարգացման և լայն աշխատավորական մասսաների ու մասնավորապես յերիասարգութեան անտեսական գրութեան բարելավման հետ միասին աճել ու զարգացել է Հայաստանի Լենինյան կոմյերիտմիութեանը: Յերկրի քաղաքական և անտեսական վերելքը, խոշոր ազգակ է հանդիսացել ինչպես կոմյերիտմիութեան, նույնպես և

Նրա ղեկավարութեան տակ՝ դռնվող վողջ աշխատավոր յերիտասարգութեան հասարակական-քաղաքական ակտիվութեան բարձրացմանը:

Սակայն բանվորների և գյուղացիների հասարակական-քաղաքական ակտիվութեան զուգընթաց նկատվում և նաև բանվոր դասակարգին և նրա կուսակցութեանը հակադիր տրամադրութեանների և գաղափարախոսութեան առաջացումը: ՆԵՊ-ի հետորդհետև բարդացող և հակասական այդ պայմաններում, չափազանց դժվարանում և յերիտասարգ սերնդի բոլշևիկյան դաստիարակութեան գործը:

Կուսակցութեանը, սոցիալիստական—անտեսական շինարարութեան ընույթ կրող ինդիքներից դատ, պետք և զբաղվի նաև վոչ պակաս կարևոր մի ինդիքով, նա աստիճանաբար պիտի մըշակի մարդկային այն «մատերիալը, վորն վիճակված և ավարտելու սոցիալիզմի շինարարութեան գործը» (Լենին) և վորն իր գիտութեամբ ընդունակ պիտի լինի ղեկավարելու խորհրդային յերկրի տեխնիքապես ավելի զարգացած սոց. արդշունարիութեանն ու ինտենսիֆիկացիայի յենթարկված գյուղատնտեսութեանը:

Այդ ինդիքին կարելի չի հաջող լուծումն առլ միայն այն ղեպքում, յերբ մեր կուսակցութեան և կոմյերիտմիութեան ղեկավար մարմինները ամբողջովին կընդգրկեն, կը ղեկավարեն և սոցիալիստական շինարարութեան հունի մեջ կը գնեն յերիտասարգական լայն զանգվածների ակտիվութեանը:

ՀԼԿՅՅԵՄ ԱՇԽՍԱՆՔԸ

2. Ընդգծելով ՀԼԿՅՅԵՄ մի շարք նվաճումները, (բանվոր յերիտասարգութեան 85 տոկոսի ընդգրկումը, գյուղական աշխատանքների ուժեղացումը, քաղ-դաստիարակութեան ծավալումը, նոր ակտիվի առաջ քաշումը, հակակուսակցական թեքումների դեմ մղված պայքարի հետևանքով կոմյերիտմիութեան մտեցումը կուսակցութեան ու նրա ղեկավարութեանը կայն), կուսակցական համագումարը միութեան հիմնական թերութեանները համարում և հետևյալը՝

- ա) Միութեան վորակը հետ և մնում քանակային աճումից:
- բ) Դիսցիպլինան թուլացիլ և:
- գ) Վորոշ հակասութեաններ և առաջացիլ աշխատանքի ձևվերի ու բովանդակութեան և անտեսական աճման հետևանքով յերիտասարգութեան առաջադրած նոր պահանջների միջևի:
- դ) Կուսակցական կորիզն անբավարար և (8,2 %):

յե) Անգրագիտությունը բավական մեծ տոկոս է կազմում (21,5%):

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ ՅԵՎ ՊՐՈՒԵՏԱՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Մոտ 10,000 քաղաքականապես անմշակ բանվոր և գրվածաբան գյուղացի յերիտասարդության ՀԼԿՅԵՄ շարքերն անցնելը, Հայաստանի կոմկուսակցության և ՀԼԿՅԵՄ-ի առաջ կոմյեխիսական մասսաների ընդհանուր վորակային բարձրացման հիմնական խնդիրն է դնում:

Կուսակցության համագումարը գտնում է, վոր միության հետագա առողջ աճման առաջ քայարձակապես վոչ մի արգելք չպետք է գրվի, բայց մյուս կողմից չպետք է մոռանալ պրոլետարական ուժեղ զեկավարության ապահովման խնդիրը: Այդ զեկավարությունը պետք է ապահովել վոչ թե ԼԿՅԵՄ մեջ տարբեր սոցիալական խավերի տոկոսային հարաբերության մեխանիքական կանոնավորմամբ, այլ «բանվորա-գյուղացիական բրկի ամբապնդման քաղաքական անշեղ գծով, բանվոր, բատրակ և չքավոր գյուղացի յերիտասարդության ակտիվի առաջ քաշումով, կուսակցական կորիզի ամրացմամբ ու լայնացմամբ և ամբողջ բանվոր յերիտասարդությունը միության շարքերը գրավելու միջոցով» (ՌԿԿԿԿ կազմ. բյուրոյի վորոշումը ապրիլ 1925 թ.):

Կոմյեխիսական և կուսակցական շրջաններում անհրաժեշտ է քայարել միության կազմակերպչական զարգացման խնդիրները, պայքարել նկատվող «նեղ դասակարգայնության» տենդենցներին դեմ, «վորն իսկապես նշանակում է հրաժարվել յերիտասարդ գյուղի զեկավարման գործից և այդ զեկավարությունն անխուսափելիորեն հանձնել բուրժուական տարրերին» (13-րդ համագումարի «աշխատանք յերիտասարդության մեջ» բանաձևից):

4. Ստեղծվող նոր պայմաններում, Հայաստանի կոմյեխիսմիության մեջ պրոլետարական կորիզի զեկավար գերն ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ է լուրջ ուշադրություն գարձրնել քաղաքային-բանվորական կազմակերպությունների վրա (Յերևան, Լենինական, Ալլահվերդի, Ղաթար), ձեռք առնելով բոլոր միջոցները վողջ բանվոր յերիտասարդությանը ԼԿՅԵՄ-ի մեջ ընդգրկելու համար:

5. Հետագա աճման ընթացքում անհրաժեշտ է՝

ա) Կանոնավորել կոմյեխիսմիության աճումը գյուղում, վերացնելով նրա տարբերային բնույթը, վորը նկատվել է մի քանի կազմակերպություններում:

բ) Ընդգրկել բատրակներին, խորհրդային անտեսություններին և անաշխատգործական արտադրութեան մեջ վարձու աշխատանք կատարող յերիտասարգութեանը, միաժամանակ ուժեղացնելով գյուղական չքավորութեան լայն մասսաների ընդգրկումը:

գ) ԼԿՅՆՄ-ի մեջ ընդունել միջակ գյուղ-յերիտասարգութեան այն լավագույն մասը, վորը գիտակցարար աջակցում և չքավոր և միջակ գյուղացիութեան միացմանը՝ ընդգեմ կուլակի:

դ) Հատուկ ուշադրութեամբ դարձնել աղջիկներին միութեան մեջ ընդունելու խնդրին:

6. Հայաստանի մի շարք գավառներում գյուղացիական յերիտասարգութեան «յերիտասարգական անկուսակցական միութեաններին» ինքնակազմակերպման փաստն անհրաժեշտ և ուսումնասիրել և հետագա աշխատանքների ընթացքում կանխել այդպիսիների կազմակերպչական ձեւակերպումը:

Այդ իսկ պատճառով միութեան աճումն չպետք և սահմանափակել միայն գոյութեան ունեցող բջիջներին ընդարձակմամբ, այլ և անհրաժեշտ և նոր բջիջներ կազմակերպել, մանավանդ այն գյուղերում, վորտեղ այդ թիւադրում են քաղաքական-անտեսական պայմանները, և անկուս. յերիտասարգութեան խոշոր ակտիվութեան հետևանքով առաջ յեկած ինքնակազմակերպման տեսչեցները:

ՊԵՏՔ Ե ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼ ՅԵՐԻՏԱՍԱՐԳՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ

7. Բանվոր յերիտասարգութեանը ձգտում և բարելավել իր նյութական դրութեանը, առաջին հերթին բարձրացնել իր աշխատավարձը, բաւարար պրոֆկրթութեան և բարձր արտադրական վորակ ստանալ, ինչքան կարելի յե ակտիվ մասնակցել ձեռնարկութեան անտեսական կյանքին, հանգատի և զվարճութեան վորոշ ժամեր ունենալ և այլն: Այդ ցանկութեանները լինելով միանգամայն առողջ յերևույթներ, կարող են տեղիք տալ յերկու սխալ թեքումներին: Առաջինը նրանց անքննադատարար խրախուսելը, անխուսափելիորեն խզումն առաջ կը բերի բանվորների առանձին խմբերի և վորջ գասակարգի, առանձին բանվորների և բանվորական պետութեան միջև, զարկ կտա քաղքենիական-բուրժուական անհատապաշտութեանը բանվոր գասակարգի մեջ և կը դժվարացնի սոցալիստական շինարարութեան գործը: Յերկրորդ թեքումն ուղղակի ժխտում և բանվոր յերիտասարգութեան նյութական ապահովման համար առողջ հոգասարգութեանը: Այդպիսով անձնական

և խմբակային շահը ամբողջ դասակարգի շահերի հետ շաղկապելը՝ կոմյերիտամիության վողջ աշխատանքի կենտրոնական խընդիրն է:

8. Քաղաքներում ամենաամուր և ամենաաշխուժ բջիջներն աչն բջիջները կը լինեն, վորոնք կը կարողանան կոմյերիտականի անձնական ապրուստի բարելավումը շաղկապել սոցիալիստական արդյունարերության ընդհանուր շահերին և հետևաբար հեղափոխության ընդհանուր շահերին: Փյուլում ամենաամուր և ամենաաշխուժ բջիջներն աչն բջիջներն են, վորոնք գյուղատնտեսության բարձրացման նպատակով գործնական աշխատանք կը տանեն (գյուղատնտեսական խմբակների, կոոպերացիայի, գյուղատնտեսի հետ սերտ կապ հաստատելու և այլ միջոցներով): Ամենաամուր և ամենաաշխուժ ակումբներ աչն ակումբները կը լինեն, վորոնք կտան վողջ միայն չոր ու ցամաք նյութ, այլ վորոշ շափով և կենդանի զվարճություն:

9. ԼԿՅՅՄ-ի վրա պարտականություն է ընկնում ողնել գյուղական յերիտասարդությանը կյանքի և աշխատանքի նոր ձևվերի անցնելուն: ԼԿՅՅՄ պետք է լինի հասարակական-քաղաքական և կուլտուրական նորություններ մտցնողներից առաջինը՝ ինչպես որինակ, հող մշակելու նոր ձևվերի կիրառումը, անգրագիտության կատարյալ վերացումը, տեխնիքական բարելավում մտցնելը: ԼԿՅՅՄ պետք է աջակցի յերիտասարդությանը գյուղատնտեսական կոլլեկտիվների շուրջը համախմբվելու, ցուցադրական տնտեսություններ կազմակերպելու և առհասարակ ողնելու նրա կոոպերացման գործին:

10. ԼԿՅՅՄ աշխատանքի մեջ ընդհանրապես, իսկ գյուղում մասնավորապես, պետք է զբաղվել ինտելիգենցիայի՝ ուսուցիչներին, գյուղատնտեսներին և բժիշկների լավագույն ուժերը: Այս հարցի վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել, վորովհետև գյուղում ուսուցիչները, գյուղատնտեսներն ու բժիշկները կարող են ամենախոշոր զբաղական զեր խաղալ, յեթև կոմյերիտական բջիջները մոտենան նրանց և համագործակցեն նրանց հետ:

11. Ընդգծելով ԼԿՅՅՄ աշխատանքների խոշոր հաջողությունները յերիտասարդության միջից անցյալից ֆնացած ազգային ներհակությունը վերացնելու գործում, համագումարն առաջարկում է տվելի մեծ ուշադրություն ուրձնել յերիտասարդության միջազգայնական դաստիարակության խորացման վրա, վճռական պայքար մղելով բոլոր տեսակի շեղումների դեմ: Սրա հետ միասին համագումարը լուրջ ուշադրություն և հրավիրում ազգային փոքրամասնությունների մեջ աշխատանքներն ուժեղացնելու անհրաժեշտության վրա:

ՀԼԿՅԵՄ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

12. ՀԼԿՅԵՄ պետք է հաշվի առնի անկուսակցական յերիտասարդության խավերի ակտիվությունը և իր հասարակական-քաղաքական և կուլտ-դաստիարակչական աշխատանքները ևլ ավելի ժողովների յերիտասարդության հիմնական պահանջներին:

Փյուզում արտամիութենական յերիտասարդության մեջ տանելիք մասսայական աշխատանքների միջոցներ մշակելը, կուսակցության և առավել ևս կոմյերիտմիության հետագա աշխատանքների հիմքը պետք է կազմի:

13. ՀԼԿՅԵՄ իր առօրյա հասարակական-քաղաքական աշխատանքների ընթացքում թե գյուղում և թե քաղաքում պետք է պայքարի, ինչպես «ազմինխատրատիվ» (վարչական) նույնպես և նեղ «կուլտուրական» թեքումների դեմ, ոգտագործելով հաս. քաղաշխատանքները կոմյերիտականներին կոմունիստական վոլոլ գատիարակելու համար: Հասարակական աշխատանքներում գյուղ-կոմյերիտականների կոնկրետ մասնակցությունը պետք է ընթանա հետևյալ ուղղություններով.

ա) Մասնակցել գյուղխորհուրդների և նրանց սեկցիաների աշխատանքների աշխուժացման գործին:

բ) Կոմյերիտականներին և յերիտասարդական լայն խավերին մասնակից անել կոոպերատիվ շինարարությանը:

գ) Ուժեղացնել գյուղվոխոգկոմների աշխատանքներում ունեցած մասնակցությունը:

դ) Մասսայականացնել Կարմիր բանակի գաղտնաբեր և մասնակցել աշխտավոր բնակչության սազմականացման գործին:

ե) Կանոնավորել և ուժեղացնել գյուղի կուլտուրական աշխատանքները, և խրճիթ-ընթերցարանները դարձնել գյուղի միակ կուլտուրական կենտրոնը:

զ) Ուժեղացնել միության անդամների մասնակցությունը գյուղատնտեսության բարձրացման ասպարիզում, կազմակերպելով գյուղատնտ. խմբակներ, վորոնց աշխատանքներին մասնակից դարձնել արտամիութենական յերիտասարդությանը:

14. ՀԼԿՅԵՄ քաղաքային կազմակերպությունների հասարակական քաղաքական աշխատանքները հիմնականում պետք է ընթանան.

ա) Արտադրողական խորհրդակցությունների (կոմիտիաների) աշխատանքներին մասնակցելով:

բ) Պրոֆմիության աշխատանքներին ակտիվ մասնակցելով:

գ) Քաղ-խորհուրդների և նրանց սեկցիաների աշխատանք-

ներին քաշելով կոմյերիտական և անկուսակցական յերիտասարդներին:

15. Մասայական աշխատանքը պիտի ծառայի միության քանակական աճման վորակային ամրապնդմանը: Չափազանց լուրջ և մեծ ուշադրություն պետք է դարձվի գործարանային բջիջների վրա, նրանց աշխատանքի ընդունակութունը բարձրացնելու և ծանրաբեռնումից թեթևացնելու համար, նպատակ ունենալով միության անդամները վրա հավասար կերպով բաժանել ֆունկցիաները:

16. Պետք է առաջնակարգ նշանակութուն տալ ներմիութենական դեմոկրատիայի ծավալմանն ու խորացմանը: Այստեղ անհրաժեշտ է մասայական կերպով մշակել և քննության առնել միութենական հարցերը, վճռական կերպով հրաժարվելով խնդիրները հանձնաժողովներին և բջիջային ակտիվի սահմանափակ խորհրդակցություններին միջոցով լուծելուց:

17. Դիսցիպլինայի նկատելի թուլացումը վոչ միայն ԼԿՅՑՄ անդամներին մասնաներին, այլ և ակտիվի շրջանում, վոր արտահայտվում է կոմիտեներին և ամբողջ կազմակերպության առաջ պատասխանատվություն չզգալու մեջ, պետք է վճռական կերպով ընդդիմության հանդիպի միության բոլոր անդամների և առաջին հերթին ակտիվի կողմից:

Ներկայումս պայքարը դիսցիպլինայի և պատասխանատվության ուժեղացման համար, պետք է լինի ԼԿՅՑՄ հիմնական աշխատանքներից մեկը:

18. Պրոֆ. կազմակերպություններին հետ միասին պետք է աշխատել դրական լուծումն տալ բանվոր յերիտասարգության աշխատավարձի և վորակավորման հարցերին, հարկավոր է մշակել պրոֆմիության և կոմյերիտմիության միասնական աշխատանքի ձևերն ու մեթոդները և յերիտասարգությանն ակտիվ կերպով մասնակից դարձնել պրոֆ. աշխատանքներին:

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

19. ՀԼԿՅՑՄ իր շարքերում միացնելով մոտ 18,000 կոմյերիտականներ, և ղեկավարելով վոզ անկուսակցական աշխատավոր յերիտասարգությանը, հետագայում, վորպես կուս. ազդեցության հազորդինն ու նրա ղեկավար (պահեստը), կը կարողանա իր գերն կատարել միայն այն դեպքում, յերբ նրա շարքերում պահպանված լինի կուսակցության ուժեղ ղեկավարությունը:

Կուս. ղեկավարության մի ձևը-դա փոխադարձ ներկայացուցիչներ տայն է, վոր կրել է սովորաբար ձևական բնույթ: Հետագայում կուս. Կենտկոմը և ստորին կազմակերպությունները,

կուս. զեկավարութեան այդ ձևի վրա պետք է լուրջ ուշադրութեամբ դարձնեն և ուժեղացնեն ներկայացուցիչների կազմը՝ այդ աշխատանքի համար առաջադրելով վորակավոր և սլատրաստված կուսակցականներ:

Մրա հետ միասին հարկավոր է, վորպեսզի կուս. կորիզի աճումը (գլխավորապես միութեան գյուղական կազմակերպութեան մեջ) հետ չմնա միութեան քանակային աճումից, վորով միայն հնարավոր է ուժեղացնել և խորացնել ՀԼԿՅԵՄ մեջ կուս. ազդեցութեանը:

20. Հետագայում կոմյերիտականներին կուսակցութեան մեջ փոխադրելիս, չպետք է բավականանալ միայն «մեծահասակների» ընդունելութեամբ, այլ ԼԿՅԵՄ մեջ կուս. կորիզը մեծացնել նաև ավելի յերիտասարդ և սոսկուն կոմյերիտականներին հաշվին:

21. Համագումարը հանձնարարում է բոլոր կուս. կազմակերպութեաններին առանձնահատուկ ուշադրութեամբ դարձնել ՀԼԿՅԵՄ կուս. կորիզի քանակային և վորակային հետագա բարելավման վրա.

22. Կոմյերիտմիութեան գործնական աշխատանքների մեջ նկատվող բացերն ու սխալները կուս. ընկերների կողմից քննադատվելը չպետք է կրի խայթիչ բնույթ (նման վերաբերմունքի հետևանքով, կոմյերիտական շրջաններում կառավարման հակակուսակցական տրամադրութեաններ), այլ պետք է գործնական խորհուրդների ոգնութեամբ վերացվեն ԼԿՅԵՄ-ի հասարակական-քաղաքական աշխատանքների մեջ նկատվող թերութեանները և ճիշտ հոռնի մեջ գրվեն, նպաստելով յերիտասարդութեան բուշխիկյան դաստիարակութեան գործին:

23. ՀԿԿ և ՀԼԿՅԵՄ կենտ. Կոմիտեները պետք է իրենց հետագա աշխատանքների ընթացքում հատուկ ուշադրութեամբ դարձնեն կուս. և սոցիալական կազմով կայուն կոմյերիտական ակտիվի առաջաքաշման վրա, վորը կը կարողանա գործնական աշխատանքների ընթացքում բավարարել յերիտասարդութեան պահանջները, հասկանալ ԼԿՅԵՄ խնդիրները նրա զարգացման ներկա շրջանում և ապահովել կուս. ճիշտ զեկավարութեանը միութեան նկատմամբ:

ՔԱՂԴԱՍՏԻԱՐԱԿԶՍԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

24. ՀԼԿՅԵՄ շարքերում անգրագետների խոշոր սոսկուս կազմելն արգելք է հանդիսանում միութեան կուլտուր-դաստիարակչական աշխատանքների ծավալմանը: Կոմյերիտմիութեան շարքերից անգրագիտութեանը վերացնելու խնդիրը, կուս. համագումարը

հարվածային կերպով դնում ե ըրոյր կուս. և ԼԿՅԵՄ կազմակերպութեանները առաջ:

25. Տեսական գիտելիքների ձեռք բերումը, սոցիալիստական շինարարութեան գործնական աշխատանքների մասնակցութեան հետ կապակցելը Հայաստանի ԼԿՅԵՄ քաղաաստիարակչական աշխատանքների հիմքը պետք է կազմի:

26. Կոմյերիտամիութեան հիմնական բացերից մեկը պիտի համարել, աշխատանքի վորակի նկատմամբ ցույց տված անփութ վերաբերմունքը: Առաջիկայում կոմյերիտական ըրոյր կազմակերպութեանները հիմնական խնդիրն է՝ բարձրացնել յեվ բարելավել, ինչպես ամբողջ միութեան, այնպես ել յուրաքանչյուր անդամը աշխատանքի վորակը:

27. Սոցիալիզմի շինարարութեան «մանր խնդիրների» գործնական աշխատանքների ընթացքում առանց «խոշոր խնդիրների» հեռանկարների, ազգային սահմանափակման և լիկվիդատորական տրամադրութեանների ստեղծման՝ հեղափոխական հեռանկարները կորցնելու վտանգը կարող է զարգանալ յերիտասարդութեան մեջ:

28. Ներկա շրջանում կապիտալիստական յերկրների հեղափոխական ընթացքը և ՌԿԿ գյուղացիական հարցում վարած քաղաքականութեանը պետք է գտնի իր ամբողջական լենինյան պարզարանումը յերիտասարդութեան հետագա դաստիարակութեան ընթացքում:

29. ՀԼԿՅԵՄ խոշոր նվաճումներ ե կատարել ազգային փորձամասնութեանների աշխատավոր յերիտասարդութեան կազմակերպման և գաղափարական ընդգրկման ստպարեղում:

ՀԼԿՅԵՄ կազմակերպութեանները շարունակելով հետագայում այդ աշխատանքները, պետք է լուրջ ուշադրութեան դարձնեն այդ ընագավառում յերևան յեկած հիվանդագին յերևույթների (թաշխարհագրութեան, սկլոկանների, վարչական թեքման) վերացման վրա և միաժամանակ զարկ տան միջազգային վոգով դաստիարակելու խնդրին:

30. Հայաստանի աշխատավոր յերիտասարդութեանը, հարեվան խորհրդային հանրապետութեանների և ԽՍՀՄ վողջ աշխատավոր յերիտասարդութեան հետ կուլտուրապես և տեխնիքապես ավելի մերձեցնելու գործին մեծ շարիով կը նպաստի հարևան ազգութեանների լեզվի և մասնավորապես «Տոկտեմբերյան» լեզվի (ուսերենի) ուսումնասիրութեանը: ՀԿԿ շորրորդ համագումարը անհրաժեշտ ե համարում ուժեղացնել ուսաց լեզվի դասավանդումը դպրոցներում և կոմյերիտականների շրջանում զարկ տալ

այդ լեզվի ուսումնասիրութեանը, վորովհետև դա անհրաժեշտ նախապայմանն է նվաճելու այն հեղափոխական-տեսական բաղաժը, վոր թողել է բանավոր դասակարգին և նրա ավանգարդ կոմկուլան ընկ. Լենինը:

31. Համագումարը հիշեցնում է, վոր կուս. կոմիտեները կոմյերիտականների քաղղաստիարակութեան համար նույն չափով պատասխանատու չեն ինչքան կուս. անդամների գաստիարակութեան համար: Կուսկոմիտեները, կոմյերիտական քաղ-դպրոցների, խմբակների և սեմինարիաների քաղ-դաստիարակչական աշխատանքների համար պետք է ստաջադրվին ավելի պատրաստված կուսակցական ընկերներ, քան այդ լեզվի և մինչև այժմ:

32. ՀԼԿՅԵՄ Կենտկոմի և Պետհրատի յերիտասարդութեան գծով կատարվելիք հետագա հրատարակչական աշխատանքները պետք է նպատակ ունենան քաղաքի և գյուղի քաղ-դաստիարակչական ցանցի գրականութեան պահանջը բավարարել: Այդ հրատարակութեանները պետք է աղստ ու լայն մուտք գործեն միութեան մասսաների մեջ, վորը հնարավոր է միայն նրանց եժանացման միջոցով: Անհրաժեշտ է ձեռնարկել նույնպես զեղարվիստական գրականութեան հրատարակման գործին:

33. Ներկայիս յերիտասարդութեան գաստիարակման գործում յերիտասարդական մամուլն ու հրատարակութեանը պետք է իրոք ամենաառաջնակարգ տեղը գրավեն: Չնայած միանգամայն անբարենպաստ պայմաններին, յերիտասարդական մամուլն ու հրատարակութեանը վորոշ գրական գործ կատարել են: Մակայն յերիտասարդական հրատարակութեանների հարցը, վոր որբատրե կենսական նշանակութեան է ստանում, մինչև որս ել գրական լուծում չի ստացել: Համագումարը հրահանգում է Կենտկոմին յերիտասարդական առանձին հրատարակութեան ստեղծելու համար գործնական միջոցների դիմել և մոտ ապագայում ձեռնարկել առանձին կոմյերիտական հանդիսի հրատարակման գործին:

34. Կոմյերիտականների կողմնակի աշխատանքներով սաստիկ ծանրաբեռնված լինելը, կոմյերիտմիութեան զանազան աշխատանքների վոչ ուսցիտնյալ կազմակերպումը տեղիք են տվել միշտք հիվանդագին յերևույթների և բազմաթիվ կոմյերիտականների հիվանդութեան:

Կուս. համագումարը հաշվի առնելով այդ ամենը, հանձնարարում է ՀԿԿԿԿ-ին մշակել կոմյերիտական և արտամիութենական յերիտասարդութեան մեջ առնելիք Ֆիզկուլտուրայի աշխատանքների վերաբերող հարցերը և ավելի մեծ ուշադրութեան դարձնել յերիտասարդութեան սոցիալական-կենցաղային գաստիարակու-

թյան վրա, կատարելով հատուկ ուսումնասիրութիւնն այդ ուղղութեամբ:

ԲԱՆՎՈՐ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԹՈՒԹՅՈՒԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՒՍԱՆՈՂ ՅԵՐԻՏ. ՄԵՋ

35. Միջնակարգ և բարձրագոյն կրթական հիմնարկներն իրենց սոցիալական կազմով զեռ հանդիսանում են կուսակցական և կոմյերիտական աշխատանքների թույլ և ամենաղժվար ասպարեզը: Սովորող յերիտասարգութեան ներկա ակտիվութեան շրջանում ՀԿՅԵՄ-ը պետք է կարողանա այնպես կառուցել իր վողջ աշխատանքն ու զեկավարութիւնը, վորպեսզի այդ ակտիվութիւնը, խորհրդային հանրօգուտ և ներդպրոցական կրթական հունի մեջ դրվի:

36. Միջին և բարձր կրթական հիմնարկութիւնների և բանֆակների սոցիալական կազմի բարեկամման զուգընթաց, կուսակցութեանը և ՀԿՅԵՄ-ը պետք է ավելի ծավալեն իրենց զազափաբախուսական աշխատանքը, պայքար մղելու մանր-բուրժուական զազափաբախուսութեան զեմ:

37. Կուսակցութեան և Լուսժողովմի մարմինները պետք են հատուկ ուշադրութեան նվիրեն միջնակարգ զպրոցներում հասարակազիտական զիսցիպլիններ զասավանդելու ինդրին:

38. Անցյալ և այս ուսումնական տարում բանվորա-գյուղացիական յերիտասարգութեան մեջ նկատվող սովորելու մեծ ցանկութիւնը, կուսակցութեանն ու կոմյերիտութիւնը պետք է հաշվի առնեն ու ոգտագործեն:

39. Այդ տեսակեաից զպրոցական հին սիստեմի ուֆորմը (բարենորոգումը) հանդիսանում է այն միջոցը, վորի կիրաումմը ապահովում է արդյունաբերութեան և զյուղամտեսութեան անհրաժեշտ ուժերի աստիճանական պատրաստման զործը: Գյուղական զպրոցները մինչև այժմ ել չեն բավարարում զյուղամտեսութեան աճող պահանջներին, վորովհետև զեռ հարմարեցված չեն նրանց:

40. Գյուղ-յերիտասարգութեան կողմից զյուղամտեսութեան թերազնահատման, այլ և զյուղամտեսական կրթութեան բացակայութեան և մասամբ ել զյուղի զերրնակչութեան հետանքով, զյուղ-կոմյերիտականի կողմից նկատվում է մասսայական հոտանք զեպի քաղաք: Գյուղական յերիտասարգութեան կողմից նկատվող այդ թերումը պիտի վճռական կերպով հետ մղվի ինչպես կուսակցութեան, նույնպես և ՀԿՅԵՄ կողմից: Գյուղամտեսութեան ապագա զարգացման մեջ զյուղ-կոմյերիտականների ունենալիք մաս-

նակցութեան և ազդեցութեան խնդիրը պետք է մշակվի և արտահայտվի նրանց ատորյա աշխատանքների ընթացքում:

41. Գյուղական — յերիտասարդութեանը գյուղատնտեսական կրթութեան տալու գործի համար կուս. համագումարը ընդգծում է գյուղ. յերիտ գյուղացների ստեղծման անհրաժեշտութեանը, վորոնց փորձը ամբողջապես արդարացրել և իրենց ՌՍՖՍՀ-ի մեջ և մատնավորապես Հայաստանում:

42. Գյուղյերիտասարդական և պրոֆտեխնիքական գյուղացների համար նախապես պետք է ստեղծել ուժեղ նյութական բազա, աստիճանարար վերակազմակերպել քաղաքային 2-րդ. աստ. դպրոցները, վերածելով մասնագիտական տեխնիկումների:

43. Քաղաքային գյուղացներում հաճախ շարունակվում են դասավանդութեան հին ձևերը: Նրանք կտրված են արդյունաբերութեան և ժողտնտեսութեան հարաճուն պահանջներից: Այս հանգամանքը թելադրում է կուսակցութեանը վերջնականապես լուծել գյուղացական շինարարութեան խնդիրները: Համագումարը հանձնարարում է ՀԿԿ կենտկոմին գյուղացական խնդիրների շուրջը հրավիրել հատուկ խորհրդակցութեան:

44. Յերկրի արդյունաբերութեանը իր զարգացման ընթացքում մեր առաջ գնում է նոր բանվորական վորակյալ ուժերի մատակարարման խնդիրը: Այդ վորակյալ ուժի պատրաստումը գլխավորապես պետք է ընթանա տնտեսական և կրթական հիմնարկների կողմից, գործարանային, պրոֆտեխնիքական դասընթացքներ և գյուղացներ ստեղծելու գծով:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՋ


45. Վերջին տարվա ընթացքում, պիոներական կազմակերպութեան շարքերը 7000-ից 24,000-ի հասավ (պիոներներ և հոկտեմբերիկներ): Պիոներական շարժման այդ արագընթաց աճումը կուսակցութեան և կոմյերիտմիութեան առաջ նրա հետագա կազմակերպչական դաստիարակչական ընդգրկման խնդիրն է գնում:

Կուսակցական և կոմյերիտական կազմակերպութեանները հետագայում հատուկ ուշադրութեան պետք է դարձնեն պիոներական բոլոր կողմերի և ողակների գեկարարներ ընտրելու խնդրին, փորպեղել պիոներական կազմակերպութեանը ապահովված լինի կուսակցական և կայուն կոմյերիտական ակտիվով: Համագումարն անհրաժեշտ է դանում պիոներական աշխատանքի ուղարկել կոմունիստ մանկավարժներին:

46. ՀԿԿ 4-րդ համագումարը կուսակցութեան կենտկոմին

առաջարկում է առանձին ուշադրություն դարձնել և վերացնել պիոնների կամ շարքերում նկատվող մի շարք հիվանդագուհիներն ինքնուրույն (ինչպիսիք են մեծ ծանրաբեռնությունը, ֆիզիքական և կոմունիստական դատարարությունը ճիշտ և լավ հիմքերի վրա զրկած շխնեքը, սոցիալական-կենցաղային դատարարության գործը) և մաքսիմալ թեթևացման յենթարկել պիոններին:

47. Կուսակցական համագումարը Կենտկոմի ուշադրությունն է հրավիրում պիոնների կազմակերպության նյութական դրությունը բարելավման և աճման հեռանկարով նրա ակտիվ քանակային և վորակային կազմի աստիճանական ուժեղացման անհրաժեշտության խնդիրներին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0945025

40

25 ←

707

-50-

+907p.
1926p.

692

824